ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 11-Լ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի ԹԻՎ 25-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշման հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2020 թվականի հուլիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության ոստիկանության պարեկային ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 25-Լ հրամանով հաստատված հավելվածում՝

1) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«11. Ծառայությունը կազմված է վարչակազմից, վերջինիս ենթակառուցվածքային ստորաբաժանումներից, ինչպես նաև Ծառայության անմիջական ենթակայության ստորաբաժանումներ հանդիսացող Երևան քաղաքի գնդից և մարզային գումարտակներից:»,

2) 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«12. Ծառայության անմիջական ենթակայության ստորաբաժանումներ հանդիսացող Երևան քաղաքի գունդը և մարզային գումարտակները բաղկացած են շարային ստորաբաժանումներից (գումարտակ, վաշտ, դասակ և այլն), ինչպես նաև ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման, վարչական գործունեության, հերթապահ ծառայության բաժանմունքներից (խմբերից), իսկ Երևան քաղաքի գունդը նաև հետախուզման հատուկ խմբից:»,

3) 14-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«14. Երևան քաղաքի և համապատասխան մարզերի վարչատարածքային սահմաններում Երևան քաղաքի գնդի և մարզային գումարտակների գործառույթներն են՝»,

4) 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«15. Ծառայության պետի հանձնարարությամբ Երևան քաղաքի գնդի և մարզային գումարտակների ծառայողներն ըստ անհրաժեշտության կարող են իրենց գործառույթներն իրականացնել նաև իրենց կողմից սպասարկվող վարչական տարածքի սահմաններից դուրս:»:

2. Հրամանը ծանոթացնել ՀՀ ոստիկանության իրավասու ծառայողներին և աշխատակիցներին:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ
ԳԵՆԵՐԱԼ-ՄԱՅՈՐ

Վ.ՂԱԶԱՐՅԱՆ

«06» 05 2022թ.

ք.Երևան